ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 31 օգոստոսի 2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Առաքելյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Կ. Աբգարյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ա. Եղիազարյան, Վ. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Վերմիշյան:

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, մասնակիցներին ուղարկված ծանուցման, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 24.08.2017թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2017 թվականի օգոստոսի 31-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/
«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ	X
«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում armeps.am կայքում հրապարակված հրավերի 7-րդ կետին, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526 Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետով մասնակցի հայտը մերժվել է
«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	X
«ԱԼՖԱ» ՍՊԸ	X
«Հեր-ՄուշՇին» ՍՊԸ	X
«Վ ԵՎ Ա» ՍՊԸ	X

1.4 Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակցի առաջարկած գինը՝

Չափաբաժնի համարը	Գնման ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնման առարկայի նախահաշվային գինը	Գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար առանց ԱԱՀ-ի (ՀՀդրամ)					
				«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ	«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	«ԱԼՖԱ» ՍՊԸ	«Հեր-ՄուշՇին» ՍՊԸ	«Վ ԵՎ Ա» ՍՊԸ
1	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	դրամ	14623000,00	14170000,00	9870695,00	9000000,00	11500000,00	16500000,00	12160000,00

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ԳՀ միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի մասնակիցներ՝ «Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ-ն, «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն, «ԱԼՖԱ» ՍՊԸ-ն, «Հեր-ՄուշՇին» ՍՊԸ-ն և «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն իրենց գնային առաջարկները ներկայացրել են ԱԱՀ ներառյալ, բացի «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ից որն իր գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ:

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2017թ. ընթացքում շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում **հանձնաժողովը որոշեց՝**

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած Մասնակից «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում armeps.am կայքում հրապարակված հրավերի 7-րդ կետի պահանջներին:

2.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին, որի գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրություն, հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

2.3 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 7) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ն. Առաքելյան

Քարտուղար՝ ---------- Լ.Վերմիշյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Կ. Աբգարյան

2. ---------- Լ. Միքայելյան

Բացող անդամներ՝

1. ---------- Ա. Եղիազարյան

2. ---------- Վ. Թորոսյան